Հովհաննես Մկրտիչյան, ազգն Արզանյան դուրս եկավ,
Մականունն լսելով՝ շասես ազգական դուրս եկավ,
Հոգվով բեպես բարեկամ, բայց օտարական դուրս եկավ,
Թե կամիս՝ այս անունն ասեմ, ո՛ր տեղան դուրս եկավ:

Պապն իմ Փարակեցի Հովհաննես Ավետիսյանն,
Ազգի անվամբ Արզանյանց, գալիս ա մեր Հաչատրխանն,
Թիֆլիզու Սայաթ-Նովու խաղերն ասելով ատանն,
Բարեկամմն Սայաթ-Նով հավելուն վերա անվանն,
Ու և հայրն իմ Մկրտիչ անվամբ՝ Սայադյան դուրս եկավ:

Եա նորա նվատաս, ազգիս բնությունն հաշելով,
Ամբ ավելցիմ խաղերի՝ մանկական սիրտս տաչելով,
Ի միջի առնարույս մյուս էտոնոում մաշելով,
Բազում եզ հորինեցի՝ վերջում անունս հիշելով,
Երբեմն Սայադ-Ոդլի, մերթ Սայեադ-Ոդլան դուրս եկավ...

Այստեղից տեսնում ենք, որ Ասրաթյան տեղափոխված փարակեցի Հովհաննես Ավետիսյան-Արզանյանն այնքան շատ է սիրում երգել Սայաթ-Նովայի խաղերը, որ նրան մականվանում են «Սայաթ-Նով»։ Այդ պատճառով էլ երա՝ այդ Հովհաննեսի Մկրտիչ որդին կոչվում է Մկրտիչ Սայադյան։ Վերջինիս դավակն էլ, որ կրելիս է եղել պապի անունը (Հովհաննես), իր ազգի բնությանը քաշելով, այսինքն՝ երգեր երգելով և նոր երգեր հորինելով, իրեն կոչում է մերթ Սայադ-Ոդլի, մերթ Սայեադ-Ոդլան, մերթ էլ ուղղակի «Սայաթ-Նով»։ Պարզ է, որ այս տոհմը ազգակցական որևէ կապ չունի Սայաթ-Նովայի գերդաստանի հետ։

Այստեղ հետաքրքրական է նաև մի ուրիշ հանգամանք։ Մոտավոր հաշիվներով պիտի ընդունենք, որ փարակեցի Հովհաննես Ավետիսյան-Արզանյանը ծնված պիտի լիներ 1858 թվականից շուրջ 100 տարի առաջ, այն է 1750-ական թվականներին, երբ Սայաթ-Նովան դեռ պալատական երգիչ էր։ Հետևապես նա, որպես երգերի և հատկապես Սայաթ-Նովայի երգերի սիրահար և հաչող կատարող, Սայաթ-Նովայի երգերը կարող էր սովորած լինել 1770-ական թվականներին, գարձյալ երգչի կենդանության տարիներին։ Կնշանակի, նա եղել է Սայաթ-Նովայի երգերի կենդանի սկզբնաղբյուրներից մեկը, որը հավանաբար ունեցել է նաև համապատասխան երգարան։ Այս հոդի վրա ծագում են մի շարք հետաքրքրական հարցեր, որոնք սակայն առայժմ մնում են անպատասխան։

Ահա երգիչների մի ամբողջ տոհմ, ժառանգական երեք սերունդ (գուցե և ավելի), որը, մեծանում Սայաթ-Նովայի երգերի հզոր հմայքով, տարբերաբերեն որդեգրվել է նրա գերդաստանին՝ ստեղծելով մի գեղեցիկ թյուրիմացություն, որի բացահայտումն անգամ առավել ուժեղ թելերով է նրանց կապում միմյանց հետ։

Ա. ՄՆԱՑԱԿԱՆՅԱՆ

ԿԵՆԴԱՆԱԿԱՆ ԱՇԽԱՐՀԸ ՀԱՅԿԱԿԱՆ ՄԱՆՐԱՆԿԱՐՉՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հայկական միջնադարյան ձեռագրերում հայտնի են բազմաթիվ մանրանկարներ, որոնցում պատկերված են զանազան կենդանիներ ու թռչուններ։ Դրանք գրաֆիկ բնույթի վավերագրեր են, որոնք որոշ չափով օգնում են կենդանաբանական-պատմական մի շարք հարցերի լուսաբանմանը։ Ուսումնասիրելով Մաշտոցի անվան Մատենադարանի մի շարք ձեռագրերը, առանձին ուշադրությամբ զննեցինք և ընդհանուր գծերով արտանկարեցինք մի շարք կենդանաբանական ուշագրավ մանրանկարներ։ Դրանք մեծ մասամբ հանդիպում են ձեռագրերի աջ կամ ձախ լուսանցքներում, երբեմն որպես գլխազարդանկարներ։ Վերջին դեպքում մանրանկարները մեծ մասամբ գունավոր են։ Մանրանկարների մեջ կան կատարյալ ռեալիստական նմուշներ, բայց հաճախ որոշ շեղումներով բնօրինակից, որոնք, սակայն, չեն խանգարում ճանաչելու ռեալ կենդանուն։

Մեր ուսումնասիրած մանրանկարները ձեռագրի բովանդակության հետ ամենևին կապ չունեն, պատահական բնույթի են։ Ուշագրավն այն է, որ վերարտադրված են մեծ մասամբ

Հայաստանի կենդանիները։ Ահա մանրանկարները հետաքրքրական են երկու տեսակետից. մի կողմից պատկերանում են Հայաստանի կենդանական աշխարհի տարածված օրյեկտները, գագափար են տալիս Հայաստանում հանդիպող կենդանիների մասին, մյուս կողմից՝ հավանական է դառնում այն ենթադրությունը, որ Հայաստանում եղել են մարդիկ, որոնք սիրել են բնությունը, ուսումնասիրել կենդանական աշխարհը ոչ միայն այս կամ այն աշխատությունների օգնությամբ, դրքերից կամ ուրիշ ձեռագրերից են ծանոթացել կենդանիներին, այլև իրենք տեսել, դիտել են, ուսումնասիրել նրանց իրենց բնական շրջապատում, կյանքի, վարքի տարբեր մոմենտներում։ Այդ երևում է, մանավանդ, դինամիկ բնույթի մանրանկարներից, որտեղ օրյեկտները պատկերված են որևէ կենսական գործողության մեջ՝ պայքարում, սնվում հայթայթելիս և այլն։

Որոշ մանրանկարներ երբեմն հեռավոր նմանություն ունեն դիտված օրյեկտին։ Կան այնպիսիները, որոնք մանրանկարչի երևակայության ազդեցության տակ, նրա գեղարվեստական ճաշակի թելադրանքով գեղեցկացված, գունավորված են գույների պատահական համադրություններով, երբեմն էլ ոճավորված են շատ բարդ և գունավոր գարդերով։ Մանրանկարների մեջ կան նաև այնպիսիները, որոնք կատարված են հմուտ նկարչի ձեռքով, ռեալիստորեն, տեխնիկապես լիովին գրագետ և բնական գունավորությամբ։ Բեղարվեստորեն և ճիշտ նկարված մանրանկարներն այնքան ցայտուն և պատկերավոր են, որ անմիջապես ճանաչվում է Հայաստանի կենդանական աշխարհի ռեալ ներկայացուցիչը։ Եթե որևէ գրավոր վավերագրում հիշատակվում է այս կամ այն կենդանին, բնթերցողը կարդալով է իմանում կենդանու նկարագիրը, իսկ մանրանկարը բնական տեսքով ցույց է տալիս կենդանու կերպարը։ Քանի որ մեր ուսումնասիրած մանրանկարների ճնշող մեծամասնությունը պատկերում է Հայաստանի կենդանիներին, ապա ուրեմն, կարող է որոշ չափով ազդյուր հանդիսանալ Հայաստանի կենդանական աշխարհը ճանաչողության համար։

Կանգ առնենք այժմ մի քանի կոնկրետ օրյեկտների բնութագրման վրա, ընտրելով ամենաբնորոշ և ցայտուն օրինակները։ Ամենից առաջ աչքի են ընկնում նկարիչներ Ռոսլինի (XIII դ. Ավետարան, 1287, Կիլիկիա), ապա Դասպար Նրեցի (XVII դ., Նոր Ջուղա, 1660) մանրանկարները։ Ռոսլինի նկարները օժտված են բարձր նկարչական տեխնիկայով, ճշտորեն վերարտադրված է կենդանու կերպարը, գունավորումը վառ և կայուն է, լավ պահպանված։ Մաշտոցի անվան Մատենադարանի № 349 ձեռագրում (10, 13, 268 էջերում) նկարված են էզ եղջերու, վայրի բադ և վայրի այծ, որոնցից վերջինը շատ բնորոշ է և նման № 7347 ձեռագրում (6, 7, 8, 10, 16 էջերում) իսկույն ճանաչվում են ալկիոնը, ագավնին, սուլթանական հավը, արագիլը։ Տարբեր ձեռագրերում նկարված են կաչաղակ, կռավ։ Վերջինն ըստ երևույթին Հայաստանում ամենասիրված և տարածված թռչունն է եղել, այդ է պատճառը, որ նա հաճախ է հանդիպում մանրանկարներում։ № 189 ձեռագրում նկարված են զոռշ արջ (էջ 44), գիշատիչ թռչուն ցիռը՝ անհանգիստ վիճակում (էջ 516), շատ բնորոշ է դեղնավուն գունավորությամբ անտառարնակ թռչուն պիրոլը (էջ 471), բուն, ապա 1700 թ. ձեռագրում՝ երկու փայտփոր։ Մի շարք այլ ձեռագրերում հանդիպում են Հայաստանի կենդանական աշխարհի այլ ներկայացուցիչներ՝ արջ, գայլ, ընձաղջուկ, ջեյրան, վայրի այծ, վայրի ոչխար, եղապատակ, այծյամ։ Թռչունների նկարները ավելի հաճախ են հանդիպում. օրինակ՝ արագիլ, տատրակ (մեծ ու փոքր), արոս, ճերեկաբար, ալկիոն, խազտրտնիկ, ագռավ, արծիվ և ուրիշներ, սողուններից՝ օձ, անոթ մողես՝ զեղնափորիկ։

Մեր ուշադրությունն առանձնապես գրավել են այն մանրանկարները, որոնք պատկերում են կենդանուն որոշ գործողության մեջ, դինամիկ բնույթ ունեն։ Ահա երկարատ ու երկարակտուց տատրակը, որ իսկույն ճանաչվում է, մանավանդ գլխի վրայի դեպի ետ ձգված բնորոշ փետրափնջով. տատրակը գլուխը վեր ձգած կուլ է տալիս որսած ձուկը (ձեռ. № 352, էջ 431)։ Ահա գիշատիչ գայլը (ձեռ. № 189, էջ 464), որը մարմինը կծկել է և պատրաստվում է թռչելու։ Նույն տեղում նկարված է եղջերուն այնպիսի տեսքով, կարծես խուսափում է ինչ-որ թշնամուց կամ էլ պատրաստվում է հանգստանալու։ Նույն ձեռագրում (էջ 465) պատկերված է փոքր տեսակի տատրակը՝ կտուցը բաց, արագ թռչլվածքով, ըստ երևույթին շտապում է դեպի նկատված որսը։ Ահա երկու փայտփոր մագլցում են ծառի բնով, միջատներ փնտրում ճեղքերում (էջ 466)։

Նկարչական բարձր տեխնիկայով պատկերված է խիստ ուշագրավ մի մանրանկար՝ այծյամի և ընձաղջուկի պայքարը (էջ 470). ընձաղջուկն արդեն իր ժանիքները խրել է այծյամի կուրծքը, հենել նրա վրա իր մարմնի ամբողջ ծանրությամբ. այծյամի մարմնի անօգնական գիրքն այնքան վարպետորեն և ցայտուն է պատկերված, որ զգացվում է այծյամի անհուսալի



Մանրանկարների նմուշներ

1. Արագիլի և օձի մարտը, 2. Կաչաղակ, 3. Կարավ, 4. Տառեղը ձուկ է կուլ տալիս, 5. Ձևյրան, 6. Նզգերու, 7. Գայլ, 8. Ընձառյուծը հարձակվել է այծյամի վրա, 9. Խոպոպտոնիկ, 10. Ալկիոն, 11. Բազե։

վիճակը և անխուսափելի վախճանը։ Երկու կենդանիներն էլ բնորոշ են Հայաստանի կենդանական աշխարհի համար։ Գույները համարյա բնական են։ Նման էպիզոդ պատկերված է № 7623 ձեռագրում (1655 թ., Կաֆա). այս անգամ արծիվն է հարձակվել նապաստակի վրա, սակայն եթե արծվի գունավորումը փիլ թե շատ մոտ է բնականին, նապաստակինը անբնական է, պատահական (կապտավուն)։ Այնուամենայնիվ, երկու կենդանիների դիրքն էլ՝ հարձակվողի և պաշտպանվողի, արտահայտված է ճիշտ։ 1318 թ. № 206 ձեռագրում (նկարիչներ Ստեփանոս և Օհան) պատկերված է արագիլի և օձի մենամարտը. արագիլն օձին կտուցի մեջ է առել երկու տեղից. ամուր սեղմել այնպես, որ օձը շնչասպառ բացել է բերանը։ Օձի դիրքը, մարմնի դալարումները բնական տեսք են տալիս կատաղի մարտին։ Կենդանիները գունավորումը ունայ է, միայն օձի գլուխը դիտողը լավ չի պատկերել, կամ էլ ցանկացել է ավելի ահեղ դուրս բերել, նմանեցնելով առասպելական վիշապի գլխին։

Շատ հետաքրքրական է XVI դարի մի ձեռագրում (№ 8924) նկարված Հայաստանում տարածված ջեյրանը՝ վազքի մոմենտին։ Նկարի շուրջը ոճավորված շրջանակ է գծագրված տերևներից, իսկ ամենահետաքրքրականն այն է, որ կենդանու տակ տառերով գրված է «ջեյրան»։ Սա մեր ուսումնասիրված մանրանկարների միակ օրինակն է, երբ մակագրված է կենդանու անունը։

Բերված օրինակներով չեն սահմանափակվում բազմաթիվ ձեռագրերում եղած կենդանիների մանրանկարները։ Ոչ միայն կրոնական գրքեր են նկարազարդված Հայաստանի կենդանական աշխարհի տարածված տեսակներով, այլև որոշ տաղարաններում են հանդիպում կենդանական մանրանկարներ։ Այդ երևում է Արշակ Չոպանյանի ֆրանսերեն թարգմանած տաղարանների ժողովածուներից։ Մանրանկարների մեջ գերակշռում են բազմատեսակ ճնճղուկազգի երգող թռչունները, որոնցով հարուստ է Հայաստանը։ Ավելի սակավ հանդիպում են դարձյալ կարավը, արագիլը (մեկը՝ օձ որսալիս), փորրիկ բվեր, բազեներ։ Կաքաչաղները շատ քիչ են ներկայացված, բայց աչքի են ընկնում Հայաստանում տարածված վայրի այծը և վայրի ոչխարը։ Դրանք երկուսն էլ դինամիկ վիճակում են, այծը՝ վազքի մոմենտին, ոչխարը՝ նստած, գլուխը վեր ձգած. նկարիչը ոչխարի բերանին դրել է ոճավորված օղակ։ Այծը և ոչխարը պատկերված են իրենց բնորոշ եղջյուրներով, այնպես, որ իսկույն ճանաչվում են։

Մանրանկարների մեջ հազվագյուտ են այն կենդանական օբյեկտները, որոնք բնորոշ չեն Հայաստանի համար, բայց օտար երկրներից բերվելով Հայաստան՝ որպես հազվագյուտ օրինակներ պահվում էին իշխանների կալվածքներում՝ բուսաբանական այգիներում («բուրաստաններում»)։ Դրանցից է, օրինակ, Հնդկաչինից (Հարավային Ասիա) բերված սիամաբզը, որի ոճավորված մանրանկարները հաճախ են հանդիպում ձեռագրերում։ Չոպանյանի գրքում բերված խայտառավեր մանրանկարը վկայում է, որ Հայաստանում, ըստ երևույթին, պահվում, աճեցվում էին հավազգի խայտառավեր, որոնք Աֆրիկայի կենդանական աշխարհի բնորոշ ներկայացուցիչներ են։ Այդ մանրանկարները բնորոշվում են X դարի հնագույն ձեռագրից։

Մեր ուսումնասիրած մանրանկարները, կապ չունենալով ձեռագրերի բովանդակության հետ, ինչպես տեսանք, օժանդակում են Հայաստանի կենդանական աշխարհին ծանոթանալուն։ Բնական տեսքով, հաճախ բնական գունագրությամբ, ճիշտ արտահայտված բնորոշ արտաքին հատկանիշներով այդ մանրանկարները պատկերում են Հայաստանի կենդանական աշխարհի տարածված ներկայացուցիչներին։ Այդ մանրանկարները, ինչպես և ըստ ակադեմիկոս-կենդանաբան Պավլովսկու՝ ֆոլկլորում արտացոլված որոշ կենդանաբանական գիտելիքները, կարող են լինել չգրված գիտության տարրեր։

Իհարկե, մեր բերած օրինակներով չի սպառվում կենդանական մանրանկարչության ուսումնասիրությունը. անհրաժեշտ է բացահայտել նոր փաստեր։ Ակադեմիկոս Պավլովսկու առաջադրած դրույթը ժողովրդական բանահյուսության կենդանաբանական տարրերի ուսումնասիրության մասին պետք է ընդունելի համարել և այդ տեսանկյունով վերլուծել նաև հայկական բանահյուսության կենդանաբանական տարրերը։

Ռ. ԳԱԲՐԻԵԼՅԱՆ